ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

23 դեկտեմբերի 2019թ
ք. Եղեգնաձոր

N 153

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 01/15.1/22647-19 հանձնարարականը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2020թ. հունվարի մեկի դրությամբ, հունվարի մեկից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2019 թվականի
դեկտեմբերի ---23--- -ի N-123 կարգադրության

2020թ հունվարի 1-ից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ անցկացվող գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու համար և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը.

1. Մարգարյան Գեղամ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի ժ/պ /հանձնաժողովի նախագահ/
2. Ղազարյան Առուշան - ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Վայոց ձորի մարզային գործակալության պետ /համաձայնությամբ/
3. Հարությունյան Աղվան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
4. Խաչատրյան Գոհար - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
5. Թունյան Աշոտ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ
6. Ավագյան Հովիկ - ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ:
7. Հարությունյան Անի - Եղեգնաձորի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
8. Իխտիարյան Հովհաննես - Վայքի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
9. Բաբայան Նարինե - ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարության և մոնիթորինգի վարչության Վայոց ձորի մարզային բաժնի պետ /համաձայնությամբ/

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի
Մարզպետարանի գլխավոր քարտուղար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**